ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 ապրիլի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

62
(2728)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՑԱԽՈՒՄ ՃԱԿԱՏՆԵՐ ԵՆ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ

Արցախում, անվտանգային խնդիրներին զուգահեռ, ներքաղաքական կյանքը եւս լարված է:

«Ժողովուրդ» օրաթերթն Արցախի իր աղբյուրներից տեղեկացավ, որ այս օրերին Արցախում ձեւավորվել է երեք ճակատ՝ Արայիկ Հարությունյան-Սամվել Բաբայան-Ռուբեն Վարդանյան:

Մեր տեղեկություններով՝ վերջիններս գրեթե ամենօրյա ռեժիմով հանդիպումներ են ունենում տարբեր քաղաքական ուժերի, քաղաքացիների հետ, այլ կերպ ասած՝ փորձում են իրենց դիրքերն ամրացնել ու ամուր հենարան ստեղծել իրենց համար Արցախում: Թե որն է անվտանգային նման ծայրահեղ իրավիճակում ներքաղաքական լարումների պատճառը, շատ արցախցիների համար դեռ պարզ չէ:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս առումով առավել ակտիվ է հատկապես Սամվել Բաբայանը:

«Ժողովուրդ» օրաթերթը որոշ ժամանակ առաջ գրել էր, որ վերջինիս մոտ նախընտրական տրամադրություն է. շտաբներ է ձեւավորում, տարբեր ֆորմատներով հանդիպումներ է ունենում քաղաքացիների եւ քաղաքական շրջանակների հետ:

Մեզ տեղեկացրին նաեւ, որ Բաբայանն անգամ քաղաքացիներին փողոց դուրս գալու կոչեր է անում: Նա Արցախում ինչ-որ պաշտոն ստանալու անհագուրդ ցանկություն ունի, թեեւ, ինչպես մեզ վստահեցրին, Արցախում Սամվել Բաբայանի նկրտումներին այնքան էլ լուրջ չեն վերաբերվում. հավանական չեն համարում, որ Արայիկ Հարությունյանը նրան որեւէ պաշտոնի նորից կնշանակի:

Վաղը՝ ապրիլի 29-ին, գործող իշխանությունների կողմից տոն հռչակված Քաղաքացու օրն է: Դեռեւս 2019թ.-ին Ազգային ժողովը ընդունեց Կառավարության առաջարկած ««Տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրինագիծը, որով ապրիլի վերջին շաբաթ օրը սահմանվեց որպես Քաղաքացու օր: Հետաքրքրական է, որ Քաղաքացու օրը այս տարիների ընթացքում միայն մեկ անգամ 2019 թվականին է նշվել. այդ օրը Նիկոլ Փաշինյանը եւ մյուս պաշտոնյաները փակել էին Երեւանի մի շարք կենտրոնական փողոցներ եւ խորոված-փարթի էին կազմակերպել: 2019թ.-ից հետո Նիկոլ Փաշինյանի թիմակիցներն իրենք են մոռացել իրենց հռչակած տոնի մասին եւ իրենց թույլ են տալիս թքել քաղաքացու դեմքին Երեւանի կենտրոնում կամ սպառնում են կտրել մարդկանց ականջներն ու լեզուն, ինչպես ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը: Հիշեցնենք, որ 2020թ.-ին Քաղաքացու օրը չնշվեց համավարակի պատճառով, իսկ 2021թ.-ին՝ պատերազմի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարի այն կրկին մեծ շուքով կնշվի: Այսպիսով, ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացանք, որ այդ օրը բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքի տարբեր վարչական շրջաններում՝ ընդհանուր առմամբ 66 համայնքում կկազմակերպվեն միջոցառումներ: Միջոցառումները բաղկացած են 2 մասից՝ բանախոսություն եւ մշակութային միջոցառում: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ խմբակցության պատգամավորներից տեղեկացավ, որ պատգամավորներն անձամբ կմասնակցեն այդ միջոցառումներին, կմեկնեն մարզեր կամ Երեւանում կլինեն՝ ըստ ցանկության: Տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանը եւս մասնակցելու է Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումներին, բայց թե որտեղ, կառավարությունից ասացին, որ դեռեւս հստակեցված չէ: Երեւի թե միջադեպերից խուսափելու համար Փաշինյանի գտնվելու վայրը նախապես չեն ասում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Մարտի 1»-ի գործով նոր փորձաքննություններ են նշանակվել: Ավելին՝ գործով անցնող մեղադրյալներից շատերը երեկ գնացել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ հասկանալու, թե այդ ինչ նոր փորձաքննություններ են նշանակվել, ում կողմից եւ ինչ հիմքերով: Հիշեցնենք, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը «Մարտի 1»-ի գործով դիմել է Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանին: ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում նա ասել էր. ««Մարտի 1»-ի գործը մոտ 800 հատոր է: Վերջերս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին դիմել եմ խնդրանքով՝ ձեւավորել քննչական խումբ, որովհետեւ մեկ քննիչի աշխատանքի ծավալի մեջ սա հնարավոր չէ տեղավորել»: Վարդապետյանն ասել էր նաեւ, որ դատախազական հսկողություն կիրականացվի, եւ այդ գործը դրվագ առ դրվագ կուսումնասիրվի: Նկատենք, որ նորանշանակ դատախազը նշանակվելուց հետո անգամ փոխել էր գործը հսկող դատախազին, սակայն «Մարտի 1»-ի գործը այդպես էլ մնում է չբացահայտված 15 տարի անց: Հակակոռուպցիոն կոմիտեն մեկը մյուսի հետեւից կարճում է «Մարտի 1»-ի գործերը՝ վաղեմության հիմքով, եւ դեռ ավելին՝ մինչ օրս հայտնի չէ, թե ով այդ օրը սպանեց 10 քաղաքացիներին Երեւան քաղաքի կենտրոնում: Տեսնեք, թե ինչ կտան այս նոր փորձաքննությունները:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ 2023 թվականի առաջին եռամսյակի տվյալներով՝ Հայաստանի ամենախոշոր հարկատուն «Գազպրոմ Արմենիա»-ն է: Այս ընկերությունը վճարել է մոտ 21 միլիարդ դրամի հարկ: Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն այս անգամ զիջել է դիրքերը եւ պետբյուջե վճարել է 35,4 միլիարդ դրամ հարկ: Կոմբինատի հարկերը այս տարվա առաջին եռամսյակում կազմել են 15,4 միլիարդ: Վճարած հարկերն ավելացրել է նաեւ «Գրանդ տոբակո»-ն՝ 7,8 միլիարդից հասցնելով 11,6 միլիարդի: Հարկերն ավելացրել է նաեւ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ»-ը. ընկերությունը 2023-ի հունվար-մարտին բյուջե է վճարել 7,2 միլիարդ դրամ: Հարկերի ծավալով աճ է գրանցել «Ակբա» բանկը: Ընկերությունը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, մոտ 7 անգամ ավելի հարկ է վճարել (7,1 միլիարդ դրամ): Մոբայլ սենթր արթ» ընկերությունը, որը զբաղվում է հեռախոսների վաճառքով, 2022-ի առաջին 3 ամիսներին վճարել էր մոտ 1,3 միլիարդ դրամի հարկեր: Հեռահաղորդակցության օպերատորներից էականորեն հարկերն ավելացրել է «Յուքոմ»-ը. եթե 2022-ի առաջին եռամսյակում ընկերությունը վճարել էր 2,4 միլիարդի հարկեր, այժմ այդ թիվը կազմել է 3,4 միլիարդը: Ըստ ՊԵԿ-ի տվյալների՝ 1000 խոշոր հարկատուները միասին վճարել են 381 միլիարդ դրամ:

ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ

ԱՐՑԱԽԸ ՊԵՏՔ Է ԴԻՄԻ ԱՇԽԱՐՀԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթն Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի հետ:

-Պարոն Մելքոնյան, Արցախում ճգնաժամը գնալով խորանում է: Ապրիլի 23-ից Ադրբեջանն արդեն ամբողջական շրջափակել է Արցախը: Ի՞նչ զարգացումներ եք կանխատեսում, ո՞ր դեպքում հակառակորդը զիջումների կգնա:

-Ամբողջ խնդիրն այն է, որ նման լուրջ խնդիրներ լուծելու համար դու, նախ, պետք է լինես գործոն: Մենք բողոքում ենք, որ մեր դաշնակից Ռուսաստանը ոչ միայն անտեսում է, այլ շատ դեպքերում ուղղակիորեն պաշտպանում է Ադրբեջանին, դժգոհում ենք, որ Արեւմուտքը դիտորդներ է ուղարկել, բայց դիտորդների աշխատանքը չենք տեսնում, ռազմական աջակցության մասին, առհասարակ, խոսք լինել չի կարող, բայց մենք առաջին հերթին պետք է մտածենք մեր ռազմական կարողություններն ուժեղացնելու մասին: Դու ինքդ նախ պետք է լինես գործոն, հետո մյուսները կգան ու կկանգնեն քո կողքին: Մենք պետք է ձերբազատվենք այն մտքից, որ ինչ-որ մեկը մեր փոխարեն պետք է մեր խնդիրները լուծի. այդպես չէ: 90-ականների արցախյան պատերազմից հետո, երբ Հայաստանը հաղթանակներ տոնեց, բնականաբար, դարձավ գործոն տարածաշրջանում: Մենք հպարտանում էինք, որ տարածաշրջանում եղանակ ստեղծող երկիր ենք. դա իր խոսքն ասում էր նաեւ դիվանագիտական ճակատում, շատ հարցեր էինք կարողանում լուծել: Բայց 44-օրյա պատերազմից հետո վիճակը փոխվել է, եւ մենք, մեղմ ասած, նահանջել ենք: Կարծում եմ, որ առաջին հերթին պետք է դառնանք գործոն ու մեր պաշտպանունակությունը մեծացնենք: Պետք է հոգեբանորեն ձերբազատվենք այն մտքից, որ մենք դատապարտված ենք եւ որեւէ խնդիր չենք կարող լուծել. բացարձակապես այդպես չէ: Պետք է հասկանանք, որ ազգովի խնդիր ունենք կատարելու, չպետք է խնդիրը բերենք, հասցնենք Սարդարապատի:

-Պարոն Մելքոնյան, իշխանության ներկայացուցիչները խոսում են միայն Արցախում բնակվող հայ բնակչության անվտանգության երաշխիքների մասին, բայց խոսք չկա ինքնորոշման իրավունքի մասին, ինքնորոշման հարցը կարծես երկրորդական է դարձել արդեն:

-Այսօր ոչ ոք իրատեսական չի համարում, որ Արցախի ճանաչման հարցով որեւէ հարց կարվի: Մի պահ խոսվում էր, որ հանուն Արցախի փրկության պետք է դիմել աշխարհին, որպեսզի լինի անջատում՝ հանուն փրկության, քանի որ որեւէ մեկը չէր կասկածում, որ հայ ժողովուրդը ցեղասպանության լուրջ վտանգի առաջ է կանգնած: Իմ անձնական կարծքին այն է, որ Արցախի ԱԺ-ն պետք է դիմի աշխարհին եւ ակնկալի Արցախի ճանաչում: Արցախը պետք է դիմի աշխարհին անկախության ճանաչման հարցով՝ հանուն փրկության եւ նոր ցեղասպանության բացառման:

-Պարոն Մելքոնյան, Հայաստանի վարչապետը պարբերաբար կրկնում է այն թեզը, թե Մադրիդյան սկզբունքներով Հայաստանն Արցախը ճանաչել է Ադրբեջանի մաս: Այս մասին ի՞նչ կասեք, արդյոք բանակցային հետագա գործընթացին չի՞ վնասում նա:

-Հայկական կողմը միշտ էլ պահանջել է, որ Ադրբեջանին տարածքների վերադարձի դիմաց տեղի ունենա Արցախի կարգավիճակի ճանաչում. ամբողջ մեխը դա է եղել բանակցությունների: Ասել, թե Մադրիդյան սկզբունքներով Արցախի կարգավիճակի հարցը մերժվել է, այդպես չէ:

Զրուցեց ՔՐՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՏԵԽՆԻԿԱՆ ՀՆԱՑԵԼ Է

32 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ

Կառավարության երեկվա նիստում նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատակազմին հատկացվեց 32 մլն դրամ: Այստեղ ուշագրավը գումարի անհրաժեշտության մասին հիմնավորումներն են: Այսպես, հիմնավորման մեջ նշվում է, որ հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից շահագործվող որոշակի տեխնիկա, սարքեր եւ սարքավորումներ աշխատում են խափանումներով, չեն բավարարում ներկայիս տեխնիկական կամ ծրագրային պահանջներին, ինչի պատճառով հանրապետության նախագահի աշխատակազմն իր գործառույթների իրականացման ընթացքում հանդիպում է խնդիրների:

Ավելին՝ նշվում է, որ նախագահի եւ հանրապետության նախագահի աշխատակազմի գործունեության լուսաբանման համար անհրաժեշտ տեխնիկան հնացած է եւ չի ապահովում լուսանկարահանման, տեսանկարահանման եւ մոնտաժման բավարար որակական չափանիշներ:

Լուրջ խնդիրներ են ծագել համակարգչային ցանցի եւ առնչվող սարքավորումների հետ, մասնավորապես՝ սերվերներից մեկը ծանրաբեռնվածության պատճառով խափանվել է (2012 թվականի արտադրության է), որի վերանորոգումը բարդ, ծախսատար եւ ոչ նպատակահարմար է: Եվ, ահա, այս ամենը նորացնելու համար 32 մլն դրամ է անհրաժեշտ:

Այստեղ, ամեն դեպքում, հետաքրքիր է, որ մեկ տարուց ավելի է անցել, ինչ Վահագն Խաչատուրյանը ընտրվել է ՀՀ նախագահ, սակայն նրա գործունեությունից հասարակ քաղաքացիները շատ քիչ բան կարող են հիշել, իսկ հիշվողներն էլ ամենեւին Խաչատուրյանի օգտին չեն: Եվ այսպես, նրա պաշտոնավարման մեկնարկից հետո Հայաստանը կրկին դժվարություններ է ունեցել՝ սեպտեմբերյան ագրեսիա, Լաչինի միջանցքի փակում եւ այլն, սակայն այդ իրադարձությունների ժամանակ, որպես երկրի նախագահ, նրա աշխատանքի արդյունքը չի զգացվել: Միակ բանը, որով թերեւս կարող ենք հիշել Վահագն Խաչատուրյանի պաշտոնավարման մեկ տարին, սկանդալն էր, որում նա հայտնվեց նախորդ տարվա սեպտեմբերին:

Խոսքը դրվագի մասին է, երբ Խաչատուրյանը Մեծ Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթ Երկրորդի դագաղի մոտ լուսանկարվել էր, մի վայրում, որտեղ լուսանկարվելն արգելված է: Հոդվածներում նշվում էր, որ նա ոչ միայն լուսանկարվել է, այլեւ բարձր շատախոսել է՝ առաջացնելով ներկաների զարմանքը: Իհարկե, մյուս կարեւոր գործունեությունն էլ վարչապետ Նիկոլ Փաշինյանին քծնելու մեջ է:

Ահա թե ինչպես կարելի է ամփոփել այն գործունեությունը, որ նա կատարել է մեկ տարուց ավելի, եւ, փաստորեն, այս ամենը ներկայացնելու համար 32 մլն դրամ է պետք:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Այս տարվա հունվարի 31-ին ԱԺ նախկին պատգամավոր Վերսանդ Հակոբյանի որդին՝ Կարեն Հակոբյանը, դատական հայց էր ներկայացրել Երեւանի Շամպայն-գինիների գործարանի կառավարմամբ զբաղվող հորեղբոր՝ Հրայր Հակոբյանի դեմ: «Ժողովուրդ» օրաթերթը դատական տեղեկատվական համակարգից տեղեկացել էր, որ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին Վերսանդիկ Հակոբյանի որդին՝ Կարեն Հակոբյանը, քաղաքացիական դատարանում հորեղբոր դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով, որ ժառանգական գույք (շինություններ, ունեցվածք, բիզնես եւ այլն) ճանաչեն որպես այդպիսին: Նկատենք, որ դատարանը գործն ընդունել է վարույթ: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել էր նաեւ Հրայր Հակոբյանի հետ՝ հասկանալու համար, թե նա ինչ խնդիրներ ունի իր եղբոր որդիների հետ, որ գործը հասել է դատարան: Ի պատասխան՝ Հրայր Հակոբյանն ասել էր. «Դրանում որեւէ բան չկա, ժառանգության հետ է կապված: Օրն եկել է, ամեն ինչ ընթացքով կլուծվի: Կռիվ-մռիվ չէ, իրար չենք խփում, որեւէ խնդիր չունենք. եթե լինի, Ձեզ տեղյակ կպահենք»: Իսկ, ահա, ԱԺ նախկին պատգամավորի որդի Արմեն Հակոբյանը հայտնել էր. «Ես կնշեմ ընդամենը, որ Հրայր Հակոբյանը մեր հոր մահից մի քանի ամիս անց, առանց մեզ տեղեկացնելու, վաճառել է 90-ականներից Հակոբյանների ընտանիքի սիմվոլ դարձած «Ոսկե ձկնիկ» ռեստորանային համալիրը: Հասարակությունը լավ գիտի, որ հայրս եւ իր եղբայրը միասին են հիմնել իրենց բիզնեսները, հետեւաբար աբսուրդային իրավիճակի մեջ ենք հայտնվել: Փաստացի ոչ միայն զրկվեցինք գույքից, այլեւ անտեսվեցին մեր հոր՝ Վերսանդ Հակոբյանի ահռելի ներդրումն ու ջանքերը: Այսքանը»: Այսպիսով, երեկ «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրել է, որ ԱԺ նախկին պատգամավոր Վերսանդիկ Հակոբյանի որդիները էրեբունի դատարանում են. ինչով կավարտվի այս դատական վեճը՝ կիմանանք՝ հետեւելով զարգացումներին:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ՀՀ կառավարության պարտքը 2022-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 տրիլիոն 969 միլիարդ դրամ կամ 10 միլիարդ 86 միլիոն դոլար: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ՝ կառավարության նիստին, հայտարարեց, թե սա հանրության համար հետաքրքիր ու զգայուն թեմա է: «Մարդիկ ասում են՝ վա՛յ, 10 միլիարդ դոլար պարտք ունենք: Մենք պետք է մեր քաղաքացիներին ի ցույց դնենք, որ, մեր ՀՆԱ-ի համեմատ, շատ թեթեւ պարտք ունենք: Ըստ էության, 46 տոկոսով Հայաստանը համարվում է թեթեւ պարտքային բեռ ունեցող երկիր. այս տրամաբանութամբ մենք պետք է նայենք, որովհետեւ երկրները դասակարգվում են թեթեւ, միջին ու մեծ պարտք ունեցող երկրների: Հայաստանը, իր տնտեսական աճի շնորհիվ, դասվում է թեթեւ պարտք ունեցողների շարքում»,- կառավարության նիստին նշեց Փաշինյանը:

Սակայն ֆիքսենք, որ Հայաստանի կառավարության պետական պարտքը 2020 թվականից հատել է կարմիր գծի շեմն ու խախտել հարկաբյուջետային ոսկե կանոնը՝ գերազանցելով ՀՆԱ-ի նկատմամբ 60%-ի շեմը. այն 63.5% է: Դա դեֆոլտ չէ, սակայն հետագա տարիների բյուջեները պլանավորելիս Կառավարությունը պարտավորվել է աստիճանաբար նվազեցնել Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը:

2021-ին այն կազմել է 60.3%: Ֆինանսների նախարարությունը կանխատեսում է, որ 2022-ի տարեվերջին այն 51% կկազմի:

Առհասարակ, վերջին տասը տարում Հայաստանի պետական պարտքը աճել է 2.4 անգամ:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՈՐԾԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արա Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի եւ, դրանով պայմանավորված, նույն օրը ՀՀ-ում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 10-ին պատերազմը դադարեցնելու եւ Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող մի շարք տարածքներ Ադրբեջանի Հանրապետության վերահսկողությանը հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվելուց հետո, համացանցի միջոցով տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության շենքի մոտ ամբոխ է հավաքել, եւ կատարվում են զանգվածային անկարգություններ, գնացել է նշված վայր եւ միացել զանգվածային անկարգությունների մասնակիցներին: Գործը քննելու է դատավոր Արամայիս Ասատրյանը:

ԴԱՐԱԲԱՂ

ՖԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է տարածաշրջանային իրավիճակին, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքում Ադրբեջանի կողմից ապօրինի կերպով հսկիչ անցագրային կետի տեղադրմանը: Այդ համատեքստում նա խոսել է նաեւ Լեռնային Ղարաբաղում եւ Լաչինի միջանցքում ավելի լայն միջազգային ներկայության անհրաժեշտության մասին: «Ադրբեջանը շարունակաբար սրում է իրադրությունը տարածաշրջանում՝ այս անգամ ապօրինի կերպով հսկիչ անցագրային կետ տեղադրելով Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքում:

Ու եթե մինչեւ հիմա Լաչինի միջանցքը փակ էր կեղծ բնապահպանական ակցիայի պատրվակով, հիմա արդեն պաշտոնապես փակվել է Ադրբեջանի կողմից: Սա ոչ միայն տարածաշրջանում լարվածությունը մեծացնելուն, այլեւ Լեռնային Ղարաբաղում հաստատված հումանիտար ճգնաժամը խորացնելուն ուղղված սադրիչ քայլ է», - նշել է նա: Փաշինյանը նշել է. որ միջազգային հանրությունն այս անգամ հստակ գնահատական է տվել ադրբեջանական հսկիչ անցագրային կետի տեղադրմանը Լաչինի միջանցքում: «Այդ նպատակը Լեռնային Ղարաբաղի հայության էթնիկ զտումներ եւ ցեղասպանություն իրականացնելն է, եւ հենց սա պետք է լինի մեր բոլորիս, միջազգային հանրության ուշադրության առարկան: Հաջորդ հարցը, որ Լաչինի միջանցքում հսկիչ անցագրային կետ տեղադրելով ավելի է սրվում, հետեւյալն է. որքանո՞վ է Ադրբեջանն իրեն պարտավորված զգում կատարել իր միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները: Լաչինի միջանցքում հսկիչ անցագրային կետի տեղադրումը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետի կոպտագույն խախտում է: Առիթ ունեցել եմ ասելու, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ից ի վեր՝ Ադրբեջանը խախտել է եռակողմ հայտարարության, ըստ էության, բոլոր կետերը: Այս ամենի արձանագրումը, սակայն, պետք է բերի կոնկրետ եզրակացությունների, եւ ուզում եմ ներկայացնել նաեւ մեր պատկերացումներն իրադրության ընդհանուր կարգավորման վերաբերյալ», - նշել է նա:

Փաշինյանի խոսքով՝ Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը պետք է վերահսկողության տակ պահի Լաչինի միջանցքը եւ այսպիսով ապահովի միջանցքի բնականոն գործունեությունը: Այսինքն՝ բացի Ռուսաստանի Դաշնությունից, որեւէ մեկը Լաչինի միջանցքում վերահսկողություն չպետք է իրականացնի:

Ադրբեջանն էլ չպետք է խոչընդոտի միջանցքով ազատ երթեւեկությունը: Սա ճշգրիտ այն է, ինչ նախատեսված է 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ: «Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքներն ու անվտանգությունը պետք է դառնա Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ բանակցությունների առարկա միջազգային ֆորմատի շրջանակներում: Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Արդբեջանի միջեւ հնարավոր խաղաղության պայմանագրին, ակնհայտ է, որ այն պետք է ունենա իրագործման երաշխիքների եւ վեճերի լուծման մեխանիզմների հասկանալի եւ գործուն համակարգ: Հստակ պետք է արձանագրված լինեն սահմանների դելիմիտացիայի պարամետրերը, եւ որեւէ էսկալացիա բացառելու հստակ մեխանիզմներ պետք է ներդրվեն»: Նա նշել է, որ, որպես առաջին քայլ, անհրաժեշտ է Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ միջազգային փաստահավաք հրատապ առաքելության գործուղումը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

«Մենք սկզբունքորեն կարեւոր ենք համարում, որ պաշտոնական Երեւանը իր ներդրումն ունենա փոխադարձ ընդունելի լուծումների որոնման հարցում»,- ամենշաբաթյա ճեպազրույցում ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով անցակետի տեղակայումը:

«Ռուսաստանը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը ԱԳՆ-ի այս տարվա ապրիլի 24-ի հայտարարության մեջ: Ներկայումս ինչպես տեղում ռուսական խաղաղապահ կոնտինգենտի միջոցով, այնպես էլ քաղաքական մակարդակով անհրաժեշտ ջանքներ են գործադրվում Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակը կարգավորելու եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնություններին վերադառնալու համար», - հայտարարել է Զախարովան:

Հիշեցնենք, որ Բաքուն անցակետ է տեղադրել Լաչինի միջանցքում՝ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միակ ճանապարհի վրա:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի որոշմամբ՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը մայիսի 7-10-ը կգործուղվի Մոսկվա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՔՊ-ական պատգամավորը Մոսկվայում կմասնակցի ՌԴ ԴԺ եւ Պետական դումայի պատգամավորների հետ վետերանների հանդիպմանը, ինչպես նաեւ Հաղթանակի օրվան նվիրված տոնակատարություններին պատգամավորի գործուղման հետ կապված օրապահիկի եւ ճանապարհածախսի վճարումը կկատարվի ՀՀ պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին: Պատգամավորի գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ ընդունել է Ֆրանսահայերի խորհրդի նախագահ, «Գրանթ Թորնթոն Հայաստան» ընկերության պատվավոր նախագահ Դանիել Քյուրքջյանին: Նա նշել է, որ Ֆրանսահայերի խորհուրդը պատրաստ է սատար լինել Հայաստանի Հանրապետության կառավարությանը եւ ներգրավվել Հայաստանի զարգացման, համազգային օրակարգի կյանքի կոչման, ժողովրդավարական բարեփոխումների իրականացման գործում: Զրուցակիցները մտքեր են փոխանակել համագործակցության հարցերի շուրջ: Այս առումով ՀՀ վարչապետը կարեւորել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ ակտիվ աշխատանքը:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆԵՏՎԵԼ Է ՄԻՋԱՆՑՔԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻՑ ԵՎ ՄԱՀԱՑԵԼ

2023թ. ապրիլի 27-ին մեղադրյալը ցատկել է ՀՀ ֆնչական կոմիտեի Արարատի մարզային ֆնչական վարչության երրորդ հարկի միջանցքի լուսամուտից եւ մահացել:

ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի եւ 393-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի բնակիչ Միսակ Պողոսյանին 2022 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ներկայացվել է մեղադրանք՝ առանձնապես խոշոր չափերով շրջանառությունն արգելված թմրամիջոցներ պարունակող բույսեր, մասնավորապես՝ շուրջ 200 «Կանեփ» տեսակի բույս աճեցնելու, ինչպես նաեւ իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր շուրջ 277 գրամ քաշով մի քանի տասնյակ փաթեթներով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի շրջանառության համար:

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված եղել բացակայելու արգելը: Ավելի ուշ օպերատիվ նոր տվյալների իրացման արդյունքում նրա ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է տետրահիդրոկաննաբինոլ բուսական խառնուրդ տեսակի թմրամիջոց:

Ելնելով դրանից՝ մեղադրանքը լրացվել է, նրա նկատմամբ դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Կալանքի երկամսյա ժամկետը լրանալուց հետո վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ ժամկետը եւս երկու ամսով երկարացնելու վերաբերյալ, որը, սակայն, դատարանի որոշմամբ, մերժվել է, եւ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Դրանից հետո պարզվել է, որ Մ. Պողոսյանը քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել եւ վերցվել է 2023թ. ապրիլի 25-ին նրա անձնական խուզարկությամբ:

Քրեական վարույթով ձեռք բերված նոր տվյալների հիման վրա՝ դատախազի որոշմամբ՝ նրա նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում է հարուցվել, ինչից հետո մեղադրանք առաջադրելու եւ դատարան ներկայացնելու նպատակով քննիչի կողմից Ոստիկանությանը հանձնարարություն է տրվել՝ Մ. Պողոսյանին ներկայացնելու վարույթն իրականացնող մարմին: Ոստիկանության ծառայողները, ի կատարումն քննիչի հանձնարարության, 2023թ. ապրիլի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն են ուղեկցել Մ. Պողոսյանին: Վարչության երրորդ հարկում՝ միջանցքում, ուղեկցող ոստիկանների հետ պաշտպանին սպասելու ընթացքում Մ. Պողոսյանը, նախնական տվյալներով, փախուստի դիմելու նպատակով հանկարծակի ցատկել է շենքի 3-րդ հարկի պատուհանի տակ գտնվող սեղանի վրա եւ պատուհանից ցած նետվել: Արդյունքում ստացած վնասվածքներից վերջինս մահացել է:

Դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) եւ 506-րդ հոդվածի 1-ին մասի (արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել է դեպքի վայրի, ինչպես նաեւ դիակի արտաքին զննություն, որի արդյունքում մարմնի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՀԱՑԵԼ Է ԱՄԵՆԱԾԵՐ ՆԱՑԻՍՏԸ

102 տարեկանում մահացել է Զաքսենհաուզեն նացիստական համակենտրոնացման ճամբարի նախկին պահապան Յոզեֆ Շյուտցը:

2022թ. հունիսին դատարանը Զաքսենհաուզեն համակենտրոնացման ճամբարում ավելի քան 3 500 բանտարկյալների սպանությանը հանցակից լինելու համար հինգ տարվա ազատազրկման էր դատապարտել նրան, բայց Շյուտցը բողոքարկել էր դատարանի որոշումը: Ինչպես նշել է ամսագիրը, որոշում չի կայացվել, այդ պատճառով դատավճիռն օրինական ուժ չի ստացել:

Դատավարության ժամանակ մեղադրյալը համառորեն հերքում էր, որ աշխատել է համակենտրոնացման ճամբարում, եւ պնդում էր, որ գյուղատնտեսական աշխատող է եղել, բայց դատարանն այդ հայտարարությունը համարել է ոչ հավաստի՝ բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա, որոնք պարունակում էին անձնական տվյալներ մեղադրյալի մասին: Դրանք մատնանշում էին, որ նա աշխատել է որպես Էսէս-ի պահապան համակենտրոնացման ճամբարում:

Շյուտցի պաշտպանի խոսքով՝ համակենտրոնացման ճամբարի վերակացուի գործունեությունը բավարար չէ նացիստների հանցագործություններին նպաստելու գործում դատապարտվելու համար: Ընդգծվել է, որ դատաքննության ժամանակ չի ապացուցվել, որ մեղադրյալը «բանտարկյալների կոնկրետ սպանություններ է կատարել»:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱՊՕՐԻՆԻ ՁԵՆՔ

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի համայնքային ոստիկանները ապրիլի 26-ին իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում, ապօրինի զենք-զինամթերք պահելու կասկածանքով, Էջմիածին-Մարգարա ճանապարհից բաժին են տեղափոխել 26 եւ 35 տարեկան երկու երիտասարդների՝ 26 տարեկանի վարած «Մերսեդես»-ով հանդերձ: Ոստիկանությունից հայտնում են, որ բաժնում 35-ամյա երիտասարդը հայտնել է, որ մեքենայի սրահում առանց թույլտվության գազային ատրճանակ կա, որն իրենն է: «Մերսեդեսը» տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին:

ԿԱՇԱՌՔ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ

Ապրիլի 21-ին Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել էր, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տվյալների հիման վրա՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Կ. Ա.-ն, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի տեխնիկական մասի պետհրամանատարի տեղակալի պաշտոնը, կաշառք տվող Ա. Գ.-ի մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու համար Ա. Գ.-ից ստացել է 605.000 ՀՀ դրամ կաշառք:

Մասնավորապես՝ քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայողին նույն զորամասում վարորդի պաշտոնին նշանակելու հարցում աջակցելու համար վերջինիս ազգական Ա. Գ.-ն 2023 թվականի մարտին երկու միջնորդների միջոցով դիմել է հիշյալ զորամասի տեխնիկական մասի պետհրամանատարի տեղակալ Կ. Ա.-ին:

Վերջինս էլ, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով զինծառայողի օգտին գործողություն կատարելու համար, 2023 թվականի մարտի 7-ին միջնորդներից մեկի միջոցով պահանջել է կաշառք եւ նույն օրը իր ենթակային՝ զորամասի ավտոմոբիլային ծառայության պետին, հանձնարարել է նշված զինծառայողին ընդգրկել վարորդի հաստիքին նշանակվող անձանց ցուցակում:

Միջնորդներից տեղեկանալով ՊՆ պաշտոնատար անձի պահանջած կաշառքի գումարի չափի մասին՝ զինծառայողի ազգական Ա. Գ.-ն 2023 թվականի մարտի 8-ին Էջմիածին քաղաքում հանդիպել է Կ. Ա.-ին եւ որպես կաշառք նրան տվել ընդհանուր 605.000 ՀՀ դրամին համարժեք 100.000 ՌԴ ռուբլի եւ 90.000 ՀՀ դրամ: Դրանից հետո՝ 2023 թվականի մարտի 31-ին, հիշյալ զինծառայողը նշանակվել է նույն զորամասի ջոկի վարորդի պաշտոնին:

21.04.2023 թ.-ին ՊՆ պաշտոնատար անձ Կ. Ա.-ն, նրան կաշառք տված Ա. Գ.-ն եւ երկու միջնորդները ձերբակալվել են:

Նույն օրը Կ. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Ա. Գ.-ին՝ 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ միջնորդներին՝ 437-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ Կ. Ա.-ի, Ա. Գ.-ի եւ միջնորդներից մեկի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, ինչը բավարարվել է, եւ նրանք կալանավորվել են:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 56 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԳԱՅԼԵՐԸ ԱԳՐԵՍԻՎԱՑԵԼ ԵՆ

Տավուշի մարզի սարերում, անտառներում գայլերի քանակը շատացել է, դրանք բազմացել են: Տավուշցի որսորդներն ասացին, որ նախկինում գայլ որսալու համար պետությունը խրախուսում, 100 հազար դրամ գումար էր հատկացնում որսորդներին, այժմ օրենքով գայլի որսն արգելված է, ավելին՝ անօրինական կերպով գայլ որսալու համար տուգանքը կազմում է 100 հազար դրամ: Բնապահպանական խիստ օրենքներ են գործում. տուգանք է սահմանված նույնիսկ կանաչ մողես սպանելու դեպքում: Հայաստանի տարածքում երեք տեսակի գայլեր են տարածված՝ գորշ, կարմրավուն եւ սեւ: Տարիներ առաջ որսորդները Լոռու մարզի տարածքում՝ Վանաձորի մոտ, որսացել են ամբողջությամբ սեւ գայլ: Գայլերի թիվը մեծացել է, վերջին տասնամյակների ընթացքում այդ խելացի կենդանիներն ավելի խելացի եւ զգույշ, նաեւ ագրեսիվ են դարձել, գիշերները մտնում են Տավուշի մարզի անտառամերձ բնակավայրեր, սարերում գտնվող անասնապահների կացարանների տարածքներ, ոչնչացնում ընտանի կենդանիների: Դրա պատճառն այն է, որ նախկինում սարերում, անտառներում գայլերի որսը հերիքում էր, այդ գիշատիչները որսում էին առանց հսկողության մնացած, արածող ընտանի կենդանիներ, նապաստակներ եւ այծյամներ, հիմա անտառներում, սարերում շատ քիչ են առանց տերերի հսկողության մնացած ընտանի կենդանիները, նապաստակների զանգվածային հիվանդության հետեւանքով շատ քիչ նապաստակ է մնացել, այծյամներն էլ նախկին տարիներին որսագողերի զոհ են դարձել: Որսորդներն ասում են, որ գայլերը շատ զգույշ են դարձել. տարիներ առաջ որսորդների ավտոմեքենաների լուսարձակի լույսի տակ հայտնված գայլը շփոթվում, կուչ էր գալիս, որսորդները սպանում էին գիշատչին, հիմա գայլը, ավտոմեքենայի լուսարձակի լույսի մեջ հայտնվելով, փախչում-հեռանում է:

ՀԱՄԱՅՆՔԸ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԵԼ Է ԱԱԾ-ԻՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեն խնդրանքով դիմել է Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին, որպեսզի Իջեւան քաղաքի Անկախության փողոցի թիվ 10/31 հասցեում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը՝ 37.5 քառակուսի մետր մակերեսով հողամասը նվիրվի Հայաստանի Հանրապետությանը: Իջեւան համայնքի ավագանին մարտի 31-ի նիստում միաձայն՝ 17 կողմով որոշել է նշված հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը: Իջեւանի համայնքապետարանից տեղեկացա, որ այդ հողամասը գտնվում է ԱԱԾ Տավուշի մարզային վարչության շենքի հարեւանությամբ, այդ հողամասը հարկավոր է ԱԱԾ-ին: Հավելեմ, որ Անկախության փողոցը Տավուշի մարզկենտրոն Իջեւանի կենտրոնական փողոցներից է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՁԱՎԹՎԵԼ ԵՆ

Երեւան քաղաքի դատախազությունում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում նախաձեռնված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.2 հասցեի կամ հասցեի հարեւանությամբ գտնվող հողամասերը հանդիսանում են պետական եւ համայնքային սեփականություն, որոնք զավթվել են դեռեւս չպարզված անձանց կողմից, իսկ երկաթգծի վրա կառուցված շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել 2022 թվականի մայիսի 24-ին Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից գրությամբ ստացված «Հարավկովկասյան երկաթուղու» օտարման շերտի տեղամասերում ինքնակամ զբաղեցված հողամասերի վերաբերյալ տեղեկատվությունը: Վերոնշյալ տեղեկության հիման վրա՝ դատախազությունը 2022 թվականի հուլիսի 12-ին ներկայացված հարցում է ուղարկել Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ՝ խնդրելով տրամադրել նշված հասցեներում առերեւույթ հողազավթումների վերաբերյալ քաղաքապետարանում առկա տեղեկատվությունը: Քաղաքապետարանից ստացված գրության համաձայն՝ քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանության, ինչպես նաեւ «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության համապատասխան աշխատակիցները հնարավորություն չեն ունեցել մուտք գործել Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.2 հասցեի կամ հասցեի հարեւանությամբ գտնվող շինության տարածք՝ նշված տարածքը փաստացի օգտագործող Երեւանի «Ալրաղաց» ԲԲ ընկերության ներկայացուցիչների կողմից ստեղծված խոչընդոտների պատճառով: Մուտքը խոչընդոտելու պատճառով վերոնշյալ աշխատակիցների կողմից հնարավոր չի եղել իրականացնել գեոդեզիական չափագրումներ շինություններով ծանրաբեռնված հողամասերի իրավական կարգավիճակը պարզելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցների ներգրավման արդյունքում եւս չի հաջողվել իրականացնել գեոդեզիական չափագրումներ նույն պատճառով:

Դատախազությունը, ուսումնասիրելով Երեւանի գլխավոր հատակագիծը, Կենտրոն վարչական շրջանի թաղապետարանում առկա իրադրության հատակագիծը եւ Google Map-ում առկա տեղանքի պատկերը, 2023 թվականի փետրվարի 9-ին դիմել է Կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ վերոնշյալ տարածք(ներ)ի, ինչպես նաեւ երկաթգծի վրա կառուցված շինության իրավական կարգավիճակի վերաբերյալ: Կադաստրի կոմիտեից ստացված գրության համաձայն՝ տարածք(ներ)ը հանդիսանում են պետական եւ համայնքային սեփականություն, որի վրա առկա է 2 շինություն՝ առանց իրավունքի պետական գրանցման, իսկ երկաթգծի վրա գտնվող շինության կարգավիճակի վերաբերյալ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվում եւ քարտեզում տեղեկություններ չեն հայտնաբերվել:

Հաշվի առնելով, որ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համատեքստում նախաձեռնված ուսումնասիրության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.2 հասցեում կամ հասցեի հարեւանությամբ գտնվող հողամասերը հանդիսանում են պետական եւ համայնքային սեփականություն, զավթվել են դեռեւս չպարզված անձանց կողմից, իսկ երկաթգծի վրա կառուցված շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց, Երեւանի քաղաքապետարանի եւ Կենտրոն վարչական շրջանի համապատասխան պաշտոնատար անձինք, որոնց վրա օրենսդրությամբ դրված է եղել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականություն, միջոցներ չեն ձեռնարկել հողամասի ինքնակամ զավթումը կամ շենքի կամ շինության ինքնակամ կառուցումը կասեցնելու համար, ինչպես նաեւ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառել հողամասն ինքնակամ զավթած, ինքնակամ կառուցապատում իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ, 2023 թվականի մարտի 21-ին դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Քննչական կոմիտե:

2023 թվականի մարտի 28-ին Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասով (պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաեւ շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու կամ անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԿ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

Կառավարության երեկվա նիստում փոփոխություն կատարվեց 2023 թվականի բյուջեի մասին օրենքում: Դրանով Լեռնային Ղարաբաղի կառավարությանը միջպետական վարկ կտրամադրվի:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայացվող նախագծի նպատակը հետպատերազմյան ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի տարածքում ստեղծված սոցիալական լարվածությունը մեղմելն ու դրա համար լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելն է:

Նախագծով մասնավորապես նախատեսվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտներից տրամադրել միջպետական վարկ Լեռնային Ղարաբաղին 3.5 մլրդ դրամի չափով՝ հետպատերազմյան ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի տարածքում ստեղծված սոցիալական լարվածության մեղմանն ուղղված լրացուցիչ ֆինանսավորման համար:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՆ ՄԱՏՆՎԵԼ

«Արցախցիները պատրաստ են զինվել ու պայքարել, բայց դրսի անտարբերությունը հուսահատեցնում է մարդկանց»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է ԱԺ նախկին պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը, որն այս օրերին գտնվում է շրջափակված Արցախում: Ազգային ժողովի նախկին պատգամավորը պատմում է՝ սնունդը եւ առաջին անհրաժեշտության իրերը մասնակի են հասնում Արցախ, լուրջ խնդիր կա հատկապես սննդի հետ կապված: Նրա խոսքով՝ մատակարարները շատ դեպքերում անորակ ապրանք են հասցնում Արցախ. «Լարվածությունն ավելի է մեծացել, դրսի անտարբերությունը արցախցիների վրա շատ է ազդում: Մարդիկ փորձում են հասկանալ՝ ինչպես կարող է թե՛ հայրենակիցների, թե՛ աշխարհի կողմից անտարբերության մատնվել 120,000 մարդ»:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ



2023թ. մայիսի 26-ին՝ ժամը 13:00-ին, «Նոյյան Տապան» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձանց պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-4. ՀՀ ք. Հրազդան, Արտադրական գոտի, Գործարանային փող., թիվ 4 հասցեում գտնվող 166.08 քմ մակերեսով արտադրական բազա, 575.13 քմ մակերեսով օժանդակ շինություններ եւ 6860 քմ մակերեսով արդյունաբերական օբյեկտների համար նախատեսված հողամաս:

Մեկնարկային գինը սահմանվում է 387,239 ՀՀ դրամ:

Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, այն կազմում է 8,520,120 ՀՀ դրամ եւ ներառված չէ գույքի շուկայական արժեքի մեջ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում է կանխիկ կամ փոխանցումով «Նոյյան Տապան» ՍՊԸ-ի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ՝ 2472302180490020 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ՝Ա. Էլոյանին /094 411 487/:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԱՄԲԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միլանի ակադեմիայի մանկապատանեկան ճամբարը գալիս է Հայաստան ու բացում իր դռները Հայաստանի մարզերի շուրջ 160 դպրոցական առջեւ՝ հնարավորություն ընձեռելով մարզվելու աշխարհի ֆուտբոլային լավագույն մարզիչների հետ՝ Կլաուդիո Զոլայի գլխավորությամբ:

Միլանի մարզիչներին եւ միջազգային ճամբարը Հայաստան բերելու «Ամերիաբանկ»-ի այս նախաձեռնության շուրջ համախմբվել են Team Telecom Armenia-ն, «Տաշիր» ընկերությունների խումբը եւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը»: Ճամբարը կանցկացվի «Այսօր խփենք վաղվա գոլը միասին» կարգախոսի ներքո:

Ճամբարը Հայաստանի մարզերի 11-15 տարեկան այն տղաների ու աղջիկների համար է, որոնք մասնակցել են Հայաստանի առաջնություններին, խաղում են մարզերի ֆուտբոլային ակումբներում եւ առանձնանում են իրենց խաղով:

A World Soccer Poll-ի կողմից բոլոր ժամանակների լավագույն ակումբը ճանաչված AC Milan-ի պաշտոնական ճամբարները ամեն տարի հունիս, հուլիս եւ օգոստոս ամիսներին ընդունում են հազարավոր պատանիների Իտալիայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Չինաստանից, Ճապոնիայից եւ տասնյակ այլ երկրներից:

Հայաստանում առաջին անգամ կայանալիք ճամբարը տեղի կունենա ֆուտբոլի ակադեմիայում երկու հերթափոխով՝ մայիսի 28-ից հունիսի 1-ը եւ հունիսի 3-ից հունիսի 7-ը:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

Team Telecom Armenia

Team Telecom Armenia-ն Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտում գործող ընկերություն է, որը տրամադրում է բջջային ու ֆիքսված հեռախոսակապի եւ ինտերնետի, ինչպես նաեւ թվային հեռուստատեսության ծառայություններ:

Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիաների հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հիմնադրվել է 1952 թվականին: Այն Հայաստանի խոշոր գործատուներից է եւ թիվ մեկ հարկատուն: Միայն անցած տարի ԶՊՄԿ-ն պետբյուջե է վճարել շուրջ 144 միլիարդ դրամ: ԶՊՄԿ-ն աշխարհում մոլիբդեն արտադրող 10 խոշորագույն ընկերություններից մեկն է:

«Տաշիր» ընկերությունների խումբ

«Տաշիր»-ը դիվերսիֆիկացված արդյունաբերական եւ շինարարական ընկերությունների խումբ է, որի մեջ ներառված է տնտեսություն տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող շուրջ 200 ընկերություն: Ընկերությունների խմբի հիմնական ուղղվածությունն է շինարարությունը եւ անշարժ գույքի կառավարումը: Խումբը ներկայություն ունի ՀՀ եւ ՌԴ մի շարք քաղաքներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. մայիսի 26-ին՝ ժամը 12:30-ին, դարտաղան Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց դող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 1,044,688 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում է կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ՝ 2472303816560000 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ՝Ա. Էլոյանին /094 411 487/:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

ԿՆԵՐԴՐՎԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը և ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոն ստորագրել են Հայաստանում ֆրանսերեն լեզվի օգնականների ծրագրի իրականացման համաձայնագիր ու ՀՀ ավագ դպրոցներում ֆրանսերենի խորացված ուսուցում և լրացուցիչ ֆրանկոֆոն ծրագիր իրականացնելու վերաբերյալ կրթական համագործակցության հուշագիր:

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվությունության վարչությունից Ar2Lur.a2-ին հայտնեցին, որ հանդիպմանը ներկա էր նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ողջունելով դեսպանին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ հանդիպումը լավ առիթ է՝ հայ-ֆրանսիական առանձնահատուկ հարաբերությունները եւս մեկ անգամ ընդգծելու եւ համագործակցության լայն շրջանակում մատնանշելու համատեղ անելիքները:

«Շատ ուրախ եմ, որ այսօր մեր համագործակցությունն ամրապնդում ենք երկու նոր նախաձեռնությամբ: Կարեւորում եմ, որ այս նախաձեռնությունները խթանելու են դպրոցներում ֆրանսերեն խորացված ուսուցումը ու ֆրանկոֆոն լրացուցիչ ծրագրի ներդրումն ու իրականացումը: Ներկայում մենք հանրակրթության ոլորտում իրականացնում ենք մի շարք բարեփոխումներ, եւ օտար լեզուների իմացության բարելավումը մեր բարեփոխումների առանցքային ուղղություններից է: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ֆրանսիայի կառավարությանը կրթական ծրագրերին շարունակական աջակցություն ցուցաբերելու համար: Լիահույս եմ՝ այս նոր ծրագրերը կամրապնդեն դպրոցներում ֆրանսերենի իմացությունը, որը ոչ միայն լեզվի իմացություն է, այլեւ քաղաքակրթական արժեհամակարգ, որը նպաստելու է երկու երկրների միջեւ հարաբերությունների առավել խորացմանը»,- նշել է ԿԳՄՍ նախարարը:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ Հայաստանում ֆրանսերեն լեզվի օգնականների ծրագրի իրականացման ուղղությամբ առկա է բավական մեծ առաջընթաց: Համաձայնագրի ստորագրմամբ հնարավորություն կընձեռվի ֆրանսերեն լեզվի օգնականներ տրամադրելու ՀՀ այն ուսումնական հաստատություններին, որտեղ դասավանդվում է ֆրանսերեն. «Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ «Ֆրանսերեն» առարկայի հայ դասավանդողներին, ինչպես նաեւ սովորողներին մշտական շփում ունենալու ֆրանսերենը՝ որպես մայրենի լեզու կրողների հետ եւ այդպիսով բարելավելու ֆրանսերենի իմացության մակարդակը»:

ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոն իր հերթին պատրաստակամություն է հայտնել աջակցելու ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման խորացման եւ ներկայացված ծրագրերի ընդլայնման, ինչպես նաեւ համագործակցության շարունակման նախաձեռնություններին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ ՀՀ դպրոցներում ֆրանսերենի ուսուցման զարգացման հնարավորություններին առնչվող հարցեր:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

1–ԻՆ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ապրիլի 26-ին 1-ին կարգի դիպլոմներով է պարգեւատրել 2022-2023 ուստարվա դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների հաղթողներին:

Այս տարի հանրապետական առարկայական օլիմպիադաներին 1582 դպրոցական է մասնակցել: Նրանցից 68-ը ստացել է առաջին, 137-ը՝ երկրորդ, 180-ը՝ երրորդ կարգի դիպլոմներ, իսկ 246-ը՝ գովասանագրեր: Հանրապետական առարկայական օլիմպիադաներն անցկացվել են 16 առարկայից: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, շնորհավորելով աշակերտներին, ուսուցիչներին եւ նրանց ծնողներին, հույս է հայտնել, որ նրանց հաջողությունները շարունակական կլինեն. «Վստահ եմ՝ սրանք ամենափոքր հաջողություններն են, որ դուք գրանցել եք եւ դեռ գրանցելու եք ձեր ուսումնառության եւ հետագա, ինչու ոչ, աշխատանքային գործունեության ընթացքում: Շնորհակալություն եմ հայտնում ձեր ուսուցիչներին, քանի որ նաեւ իրենց ջանքերով է պայմանավորված այս արդյունքը»: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի խոսքով՝ գործընթացում ներգրավված ցանկացած մասնակցի ներդրումը շատ կարեւոր է արդյունքների ապահովման տեսանկյունից: Այս համատեքստում Արաքսիա Սվաջյանն իր ցավակցությունն է հայտնել ֆիզիկայի հանձնաժողովի նախագահ Գագիկ Գրիգորյանի անժամանակ մահվան կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ անվանի գիտնականի աշակերտները կշարունակեն նրա գործը եւ հիշատակը վառ կպահեն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Մոլդովական փողոց, 46/2 շենք, 18 հասցեում գտնվող 85,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34930000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Նալբանդյան փողոց, 24 շենք, 14 հասցեում գտնվող 49,71 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Գ. Նժդեհի փողոց, 3-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող 211,8 ք.մ. բնակելի տուն, 21,8 ք.մ. ավտոտնակ, 15,6 ք.մ. ծածկ, 14,5 ք.մ. /37,7 խ.մ./ պարիսպ եւ 0,0551 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 60300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 15.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.06.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 18 շենք, 2 հասցեում գտնվող 75,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12587649 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 15.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 15.06.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *Ապրիլի 29-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սպիտակաձյունիկը եւ յոթ թզուկները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ օտարերկրյա քաղաքացիներին, որպեսզի կարողանան ՀՀ-ում որդեգրում իրականացնել:

Սիրան Հակոբյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օտարերկրյա քաղաքացիները ՀՀ-ում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու դեպքում անձամբ, իրենց լիազորած անձի, ինչպես նաեւ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության միջոցով դիմում են որդեգրման կենտրոնական մարմին՝ներկայացնելով՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի եւ այլ եկամուտների մասին տեղեկանք,

5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից,

6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով,

7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),

8) երեխայի՝ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, եւ մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,

9) տեղեկանք՝որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացին ունի նախապես ընտրած որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումի մեջ: Եթե որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացին համապատասխան փաստաթղթերը կենտրոնական մարմին է ներկայացրել լիազորված անձի միջոցով, ապա ներկայացվող փաստաթղթերի հետ պետք է ներկայացնի իր կողմից այդ անձին օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիրը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ ինչ է նշանակում «լողացող» փոխարժեքի քաղաքականություն:

Դիաննա Գրիգորյան (30 տարեկան, տնտեսագետ)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ, համաձայն արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ամենամյա հրապարակվող «Արժութային կարգավորումներ եւ արժութային սահմանափակումներ» հաշվետվության մեջ տրված սահմանման, «Ազատ լողացող» փոխարժեքի քաղաքականությունը նշանակում է, որ փոխարժեքը որոշվում է շուկայում:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում ձեւավորված դրամի միջին փոխարժեքը հրապարակվում է որպես հաշվարկային միավոր ՀՀ ԿԲ-ի համար եւ, ըստ ցանկության, կարող է օգտագործվել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Լուսանկարն արվել է Բռնցքամարտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանը հրապարակել է կազմը, որը կմասնակցի աշխարհի առաջնությանը. հաղորդում է ՀԲՖ-ի մամուլի ծառայությունը:

Աշխարհի առաջնությունը կանցկացվի մայիսի 1-14-ը Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 8 +12 + 16
	Կոտայքի լեռներ	+ 3 + 6 +12 + 14
	Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +18 + 20
	Գեղարքունիք	+ 2 + 6 +12 + 17
	Լոռի	+ 4 + 8 +17 + 20
	Տավուշ	+ 7 + 12 +20 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 7 +12 + 14
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +18 + 22

	Արարատ	+ 9 + 12 +22 + 25
	Արմավիր	+ 8 + 10 +22 + 24
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 +14 + 17
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +18 + 22
	Սյունիքի հովիտներ	+11 + 14 +25 + 30
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +20 + 26
	Արցախ	+11 + 15 +27 + 32
	Երեւան	+ 9 + 11 +21 + 23

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*